*ըեվարք տանն հայոց ամէն։ Դաշնագիրս երկու միմեանց համեմատ ձեռնադրեցաք, մինն ես աբրահամս ձեռնադրեցի վասն պատուելի եղիսաբեթի, և մինն ես եղիսաբեթս ձեռնադրեցի վասն Տեառն աբրահամու 'ի գեօղն մուղնու յայամ աւուր Օգոստոսի ամսի վեց յամի Տեառն փրկչին մերոյ 1773։*

| | |
|---|---|
| *Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.* | *Աբրահամ որդոյ Ադամի.* ○ |
| *Սիմէօն որդոյ Մարկոսի* ○ | *Յեղիսաբեթ դուստր Եղիազարի.* ○ |
| *Աթանաս որդոյ Կիրակոսի.* ○ | |

Օրինակ Գանգատագրի առ յապարանն Դատաստանի։

## ԳԼՈՒԽ ԶԳ.

*Առ Պատուելի Դատաւորքն Յապարանի Դատաստանի 'ի մէջ Երևան քաղաքին։*

*Ձերոյ գանգատող Սարգիս Բամբակայձորու հողագործ ընդ դէմ Դատախազ Միքայէլ ձկնորս վահանու, երկայնամիտ լերուք։*

*Ներքոյ գանգատողն յամսեանն սեպտեմբերի թուին փրկչին 1770 միով վաշխապարտ թղթով յանձնեցի դատախազ միքայէլ ձկնորսին վահա-*